ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 31 – Ա **05 փետրվարի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2004- 2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված ՀՀ Գեղարքունիքի մարզի 2004-2005 թվականներին ծնված պատանիների բռնցքամարտի 2018 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի

2) Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված ՀՀ Գեղարքունիքի մարզի 2004-2005 թվականներին ծնված պատանիների բռնցքամարտի 2018 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100- ամյակին նվիրված ՀՀ Գեղարքունիքի մարզի 2004-2005 թվականներին ծնված պատանիների բռնցքամարտի 2018 թվականի մարզային առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի

2. Կազմկոմիտեին՝

1) կազմակերպել բռնցքամարտի մարզային առաջնության բացման և փակման հանդիսավոր արարողություն.

2) մրցումների ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական

ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100- ամյակին նվիրված ՀՀ Գեղարքունիքի մարզի 2004-2005 թվականներին ծնված պատանիների բռնցքամարտի 2018 թվականի մարզային առաջնության անցկացման օրերին ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. փետրվար 5 -ի
N 31-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2004- 2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գարիկ – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Պողոսյան Անուշ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Ադամյան Վազգեն – Ճամբարակ համայնքի ղեկավար /համաձայնությամբ /

Կարապետյան Արսեն - ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի ՀՀ Գեղարքունիքի մարզի պատասխանատու /համաձայնությամբ /

Խլղաթյան Խոսրով - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ /

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. փետրվար 5 -ի
N 31-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2004-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

1. Նպատակն ու խնդիրներն են

Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված Գեղարքունիքի մարզի 2004-2005 թվականներին ծնված պատանիների բռնցքամարտի 2018 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- ՀՀ Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության խնդիրների իրականացմանը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը
- մարզիկների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը
- մարզի հավաքական թիմը համալրելու նպատակով, ի հայտ բերել լավագույն մարզիկներին
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին:

2. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մարզային առաջնությունը կանցկացվի Ճամբարակ համայնքի N2 մանկապարտեզի շենքում տեղակայված բռնցքամարտի դահլիճում՝ 2018 թվականի փետրվարի 24-25-ին: Թիմերի ընդունելության օրը՝ փետրվարի 24-ին ժամը 9:00-ին, մարզիկների կշռումը կկայանա նույն օրը ժամը 9:30-ից մինչև 11:00-ն: Մրցումների սկիզբը՝ ժամը 12:00-ին:

3. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել մարզադպրոցների, մարզական ընկերությունների և համայնքների կողմից հայտավորված 2004-2005 թվականներին ծնված պատանի բռնցքամարտիկներին, ովքեր չունեն առողջության հետ կապված խնդիրներ:

Առաջնությունը կանցկացվի հետևյալ՝ 37-38.5կգ, 38.5-40կգ, 40-41.5կգ, 41.5-43 կգ, 43.5-44.5կգ, 44.5- 46կգ, 46-48կգ, 48-50կգ, 50-52կգ, 52-54կգ, 54-56կգ, 56-59կգ, 59-62կգ, 62-65կգ, 65-68կգ, 68-72կգ, 72-76կգ, 76-80կգ, 80-90կգ և 90-105կգ քաշային կարգերում:

Աաջնությունը կանցկացվի բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի և սույն կանոնակարգի համաձայն:

4. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Առաջնության անցկացման ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

Մրցումներն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Թիմերի գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները / ճանապարհածախս, օրապահիկ և գիշերավարձ /

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում 1-ին և 2-րդ տեղեր գրաված մարզիկները կպարգևատրվեն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հավաստագրերով և Ճամբարակ համայնքի ղեկավարի կողմից սահմանված մեդալներով ու հուշանվերներով:

7. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Նախնական հայտերը ներկայացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիա՝ մինչև 2018թ. փետրվարի 18-ը:

Մասնակցության վերջնական հայտերը՝ հաստատված բժշկի և կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև մարզիկների անձը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են մրցավարական հանձնաժողով՝ մրցումների օրը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. փետրվար 5 -ի
N 31-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2004- 2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կարոյան Մարատ – ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ/

Սահակյան Էդգար – Ճամբարակ համայնքի բռնցքամարտի մարզիչ /քարտուղար, համաձայնությամբ/

Վարդանյան Հովիկ- Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Քամալյան Անդրանիկ- Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Հովհաննիսյան Գևորգ - Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Մելիքյան Հրաչ- Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Ղարիբյան Հայկ –Գավառի քաղաքապետարանի մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Մեքոնյան Արթուր- Գավառի քաղաքապետարանի մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Շահինյան Վազգեն –Լիճք համայնքի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Սարգսյան Գագիկ –Մարտունու քաղաքապետարանի Ս.Միերյանի անվան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Սարգսյան Գևորգ – Մարտունու քաղաքապետարանի Ս.Միերյանի անվան մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Խաչատրյան Ժորա – Նորատուս համայնքի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ